Դիլիջանի համայնքի ղեկավար
Պարոն՝ Ռ. Սարգսյանին
Դիլիջան քաղաքի Պատանի
ճանապարհ փող. 5 հասցեի
բնակչության անունից Հայաստանի
Հանրապետություն
հեռ. 094152788

Դիմում

Խնդրում եմ ձեզ, որ Դիլիջան քաղաքի
Ս.Սարգսյան 2նրբ. 8/1 հասցեի կարգավիճակ
ունեցող 20,0 ք.մ. հողամասի՝ կառուցապատման
իրավունքով: Հողամասի հողամասի նկատմամբ
ունեմ սարքավորումներ 201,052 դրամ արժեք
95 391 դրամ հաշվարկման 5 դրամ գումար:
2020թ. մայիսի 12-ի թիվ Ա.Հ.Դ./1096/04/20
անշարժության գրանցման և անշարժության
իրավունքների գրանցման մասին վկայականը եմ տրամադրել: Խնդրում եմ
ձեր ծրագրերում Դիլիջան համայնքի սեփականություն
հանդիսացող սարքավորումներ հանձնելու
անհնարին լինելու:

Դիմող՝ Ա.Ա. Գրիգորյան
01.09.2023թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA ID CARD

Ազգանուն/Surname
ԹՈՎՄԱՍՅԱՆ
TOVMASYAN

Անուն/Name
ՆԱԻՐԱ
NAIRA

Հայրանուն/Patronymic name
ԳՐԻԳՈՐԻ

Սեռ/Sex
Ի/F

Քաղաքացիություն/Citizenship
ՀՀ/ARM

Ծննդի թ/Date of birth
09.07.1971

Նույնականացման քարտի համար/Identity card number
005907886

Գործողության ժամկետ է լրանում/Date of expiry
26.01.2027

Քարտապանի ստորագրությունը/Signature of holder

09.11.15-27-88

Ծննդավայրը/Place of birth
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA

Բնակության վայրը/Place of residence
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA

Տրվել է/Date of issue
26.01.2017

Ում կողմից/Issuing authority
036

Հասարակական ծառայությունների համարանիշը/Social services number
5907710020

Ազգությունը/Nationality
ՀԱՅ
ARMENIAN

Արյան խումբը և սեռը/Blood type and sheas

I<ARM0059078861<<<<<<<<<<<<<<<
7107090F2701264ARM<<<<<<<<<<<2
TOVMASYAN<<NAIRA<<<<<<<<<<<<<<

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(աճուրդի արդյունքների մասին)

տասը մայիսի երկու հազար քսաներեք թվական ք. Վանաձոր

Ես՝ Նաիրա Գրիգորի Թովմասյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանս և Դիանա Արտակի Դալլաքյանը, կազմեցինք սույն արձանագրությունն այն մասին, որ 10 մայիսի 2023թ-ին կայացած աճուրդում Դիանա Արտակի Դալլաքյանը աճուրդային վաճառքի արդյունքում առաջարկելով 111.182 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ մեկնարկային գին ունեցող թիվ 1 լոտի՝ Նաիրա Գրիգորի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8/1 հասցեում գտնվող 11-003-0241-0060 կադաստրային ծածկագրով 0.002 հա մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 16062017-11-0009), գնման ամենաբարձր գինը 111.182 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ, ճանաչվեց աճուրդում հաղթող:

Աճուրդում հաղթողը և Նաիրա Գրիգորի Թովմասյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանը պարտավորվում են կնքել աճուրդում վաճառված թիվ 1 լոտի առուվաճառքի պայմանագիր, որում սահմանված գնման գնի մեջ հաշվանցվում է նախօրոք վճարված նախավճարը, իսկ աճուրդի մասնակցության վճարը չի վերադարձվում:

Առուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետում գնման գինը չվճարելու դեպքում նախավճարը նույպես չի վերադարձվում և մնում է սնանկության հատուկ հաշվում:

Նաիրա Գրիգորի Թովմասյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյան

Դիանա Արտակի Դալլաքյան ն/ք 008305310, տրված՝ 15.06.2016թ., 038-ի կողմից

ստորագրություն

ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0065, ՀՀ, ք. Երևան, Օտյան 53/2, հեռ. /010/ 74-29-70

N ԴԴ-22- 28526/20

22» հունիսի 2020թ.

Գործ թիվ ՍՆԴ/1096/04/20

Դիմող՝ Նաիրա Գրիգորի Թովմասյանին
(ՀՀ,Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Ուսանողական փ. 19 տ)

Պահանջատեր՝ «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին
(ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/6, թիվ 152 տարածք)

Պահանջատեր՝ «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին
(ՀՀ, ք. Երևան, Սեբաստիա փ.123շ)

Նաիրա Գրիգորի Թովմասյանի սնանկության
ժամանակավոր կառավարիչ Սուսաննա Ասլանյանին
(ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Չերնիշևսկի 3)

Ուղարկվում թիվ ՍՆԴ/1096/04/20 սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի 12.05.2020թ. վճիռը:

Առդիր՝5 (հինգ) թերթ:

ԴԱՏԱՎՈՐԻ ԳՈՐԾԱԿԱՐ՝ Ա.ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ

ՍՆԴ/1096/04/20

Վ Ճ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

«12» մայիսի 2020թ. ք. Երևան

ՀՀ սնանկության դատարանի դատավոր Լ. Կատվալյանս, քննության առնելով սնանկության գործն ըստ դիմումի Նաիրա Գրիգորի Թովմասյանի (ՀՀ, Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Ուսանողական փ. 19 տ., անձնագիր՝ AB0430306, տրված՝ 08.10.1997 թվականին, 036-ի կողմից)՝ կամավոր սնանկությունը ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

Գործի դատավարական նախապատմությունը

Նաիրա Գրիգորի Թովմասյանը 2020թ. ապրիլի 27-ին կամավոր սնանկության դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան:

Դիմումի հիման վրա կազմվել է թիվ ՍՆԴ/1096/04/20 սնանկության գործը, որը մակագրվել է դատավոր Լ. Կատվալյանիս:

Դիմումը դատավորի աշխատակազմին հանձնվել է 28.04.2020 թվականին:

ՀՀ սնանկության դատարանի 12.05.2020 թվականի որոշմամբ սնանկության ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Սուսաննա Ասլանյանը:

ՀՀ սնանկության դատարանը 28.04.2020 թվականի որոշմամբ Նաիրա Գրիգորի Թովմասյանի կամավոր սնանկության դիմումն ընդունվել է վարույթ և ուղարկվել դիմողին, ինչպես նաև պարտատերերին:

Դիմումի հիմքերը, դիմողի փաստարկները և պահանջը

Դիմողը դատարան ներկայացրած դիմումով հայտնել, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 05.06.2019թ. տրված թիվ ՏԴ/0009/02/19 կատարողական թերթի համաձայն իր պարտավորությունները «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կազմում է 775871,6 ՀՀ դրամ և հաշվարկող տոկոսներ:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.10.2019թ. տրված թիվ ՏԴ/1013/02/18 կատարողական թերթի համաձայն Նաիրա Գրիգորի Թովմասյանի պարտավորությունները «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կազմում են 853 739,8 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 02.12.2019թ. տրված թիվ ՏԴ/1021/02/18 կատարողական թերթի համաձայն իր պարտավորությունները «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կազմում է 1 105 540,2 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Միաժամանակ հայտնել է, որ սույն դիմումը ներկայացնելու պահին վերջինիս պարտավորությունների չափերը հետևյալն են.

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հանդեպ՝ 775 871,6 ՀՀ դրամ,

«Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հանդեպ՝ 853 739,8 ՀՀ դրամ,

«Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հանդեպ՝ 1 105 540,2 ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ պարտապանի պարտավորությունը կազմում է 2 735 151,6 ՀՀ դրամ:

Դիմողը նշել է, որ դատարանի կողմից սնանկ ճանաչելու դեպքում ֆինանսական առողջացման ծրագիր չի ցանկանում ներկայացնել:

Ինչպես նաև դիմումով հայտնել է, որ ժամանակավոր կառավարչի ընտրությունը թողնում է դատարանի հայեցողությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածները՝ խնդրել է իրեն ճանաչել սնանկ:

Դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Դատարանը գտնում է, որ սույն դիմումի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 05.06.2019թ. տրված թիվ ՏԴ/0009/02/19 կատարողական թերթը, համաձայն որի Նաիրա Գրիգորի Թովմասյանի պարտավորությունները «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կազմում է 775871,6 ՀՀ դրամ և հաշվարկող տոկոսներ:

2.Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.10.2019թ. տրված թիվ ՏԴ/1013/02/18 կատարողական թերթը, համաձայն որի Նաիրա Գրիգորի Թովմասյանի պարտավորությունները «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կազմում են 853 739,8 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

3. ՀՀ ԱՆ ՀԿ ծառայության Տավուշի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Թ.Թորոսյանի 23.01.2020 թվականի կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը, որով առաջարկել է պահանջատիրոջը և պարտապանին, նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

4. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրությունն առ այն, որ 24.10.2019թվականի դրությամբ առկա տեղեկությունների հարցված տվյալներով քաղաքացին հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, գրանցման վկայականի համար՝ 01Ա998848, ՀՎՀՀ՝ 70969898:

5. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պատասխան գրությունն առ այն, որ Ա/Հ Նաիրա Գրիգորի Թովմասյանի շահութահարկի հաշվարկի ակտիվների և պարտավորությունները, համախառն եկամուտները զրոյական են:

6. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ ՀՀ-ում գործող թվով 16 բանկերից ստացված պատասխաններն առ այն, որ պարտապանը չի հանդիսանում բանկի հաճախորդ և հաշվեհամարը բացակայում է:

7. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ պարտապանը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հաճախորդ է, միջոցները բացակայում են:

8. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի պատասխան գրությունն առ այն, որ պարտապանի անվամբ գրանցված է ՀՀ, Տավուշի մարզ, համայքն Դիլիջան, քաղաք Դիլիջան, Մյասանիկյան փողոց 2-րդ նրբ., 8/1 հողամաս հասցեի անշարժ գույքի կառուցապատման իրավունքը:

9. ՀՀ ԱՆ ՀԿԾ Տավուշի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան Թաթուլ Թորոսյանի 28.11.2018 թվականի որոշումը՝ կատարողական վարույթն ավարտելու մասին:

10. ՀՀ ԱՆ ՀԿԾ Տավուշի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան Թաթուլ Թորոսյանի 28.11.2018 թվականի՝ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է կիրառվել Նաիրա Թովմասյանին պատկանող Դիլիջան քաղաքի, Մյասնիկյան փողոցի 2 նրբ, 8/1 հասցեի անշարժ գույքի վրա:

11. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի գրությունն առ այն, որ քաղաքացի Նաիրա Գրիգորի Թովմասյանի անվամբ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում արժեթղթեր գրանցված չեն:

12. Ի պատասխան ՀՀ ԱՆ ՀԿԾ-ի հարցման՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի գրությունն առ այն, որ անհատ ձեռնարկատեր Նաիրա Գրիգորի Թովմասյանի անվամբ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում արժեթղթեր գրանցված չեն:

13. ՀՀ ՃՈ ծառայության Իջևանի հաշվառման-քննական բաժանմունքի 11.03.2020 թվականի թիվ 7/8 տեղեկանքի համաձայն Նաիրա Գրիգորի Թովմասյանի անվամբ հաշվառված տրանսպորտային միջոց չկա:

14. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ՔԿԱԳ Դիլիջան տարածքային բաժնի պետ՝ Արմինե Սանթրոսյանի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ քաղաքացի Նաիրա Գրիգորի Թովմասյանի /ծնված՝ 09.07.1971 թվականին/ վերաբերյալ ամուսնության ակտի գրանցում ՔԿԱԳ Դիլիջան տարածքային բաժնի արխիվում չի հայտնաբերվել/ ստուգվել է 09.07.1988թ.-ից 06.03.2020թ./:

15. «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 21.04.2020 թվականի քաղվածքի համաձայն՝ թիվ 00003634/03 գրաֆիկով վարկային պայմանագրով Նաիրա Գրիգորի Թովմասյանի ժամկետանց վարկի մնացորդը կազմում է 477 542 ՀՀ դրամ:

16. «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 21.04.2020 թվականի քաղվածքի համաձայն՝ թիվ 096577 գրաֆիկով վարկային պայմանագրով Նաիրա Գրիգորի Թովմասյանի ժամկետանց վարկի մնացորդը կազմում է 213 540,9 ՀՀ դրամ:

17.«Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից 21.04.2020 թվականին ձևավորված թիվ 00025 վարկի քաղվածքի համաձայն Նաիրա Գրիգորի Թովմասյանի ժամկետանց պարտավորությունները կազմում են 736 917,8 ՀՀ դրամ:

18.Նաիրա Գրիգորի Թովմասյանի հայտարարությունն առ այն, որ չունի իր անվամբ գրանցած գույք, և իր նկատմամբ պարտատերեր են հանդիսանում «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն և «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

19.Նաիրա Գրիգորի Թովմասյանի հայտարարություններն առ այն, որ վերջինս առողջացման մտադրություն չունի, ինչի պատճառով ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացնում: Ինչպես նաև հայտարարությունն առ այն, որ ժամանակավոր կառավարչի ընտրությունը թողնում է դատարանի հայեցողությանը:

Դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը

Ուսումնասիրելով դիմումը և գործով ձեռքբերված ապացույցները, գնահատելով դրանք և գործի մյուս նյութերը՝ գտնում եմ, որ դիմումը հիմնավորված է, բխում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ և 16-րդ հոդվածներից, ուստի ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 հոդվածի համաձայն՝ «1. Քաղաքացին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը, դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե նա իվիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները:

2. Քաղաքացուն դատարանով սնանկ ճանաչելու հիմքերը և կարգը սահմանվում են օրենքով:

3. ...»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի համաձայն «Ֆիզիկական անձանց սնանկության հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի դրույթները, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ: »:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներում սահմանված է՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կամ 2.1-ին կետերով սահմանված հիմքերի առկայության դեպքում կամավոր սնանկության դիմում ներկայացնելու պարտապանի պարտավորությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետի համաձայն՝ « Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝2) սեփական նախաձեռնությամբ՝ (կամավոր սնանկության դիմում) եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա օրենքի համաձայն բռնագանձում չի կարող տարածվել: »:

ՀՀ Սահմանադրական դատարանի 25.02.2008 թվականի թիվ ՍԴՈ-735 որոշման 7-րդ կետի համաձայն. ««Սնանկության մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք խարխլվում են այն տրամաբանության վրա, համաձայն որի՝ սնանկության հիմքն անվճարունակությունն է: Այդ մասին է, մասնավորապես, վկայում օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթը, որը և՛ կամավոր սնանկության, և՛ հարկադրված սնանկության դեպքում որպես սնանկության հիմք ամրագրում է պարտապանի անվճարունակության փաստը:

Վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն որպես պարտապանին սնանկ ճանաչելու հիմք դիտարկում է պարտապանի անվճարունակությունը, որը ֆիզիկական անձի կամավոր սնանկության դեպքում դրսևորվում է՝ վճարային պարտավորությունների առկայությամբ և այդ վճարային պարտավորությունները օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով՝պարտապանի ակտիվների արժեքը՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ, գերազանցելու հանգամանքների միաժամանակյա առկայությամբ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն դիմող՝ Նաիրա Գրիգորի Թովմասյանը սեփական սնանկությունը ճանաչելու դիմումի հիմքում դրել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 05.06.2019թ. տրված թիվ ՏԴ/0009/02/19 կատարողական թերթը, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.10.2019թ. տրված թիվ ՏԴ/1013/02/18 կատարողական թերթը, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 02.12.2019թ. տրված թիվ ՏԴ/1021/02/18 կատարողական թերթը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական

դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

Նշված նորմի տրամաբանական վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, այն դեպքում, երբ գործի քննության համար «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ կանոններ սահմանված չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն «1. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

2. Գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված փաստերի, ենթակա են ապացուցման: »:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով: »:

Դատարանն արձանագրում է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 05.06.2019թ. տրված թիվ ՏԴ/0009/02/19 կատարողական թերթի, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.10.2019թ. տրված թիվ ՏԴ/1013/02/18 կատարողական թերթի, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 02.12.2019թ. տրված թիվ ՏԴ/1021/02/18 կատարողական թերթի ներկայացմամբ հիմնավորվում է պարտապանի պարտավորության առկայության փաստը: Միաժամանակ հետազոտելով դիմողի կողմից ներկայացված «Կամուրջ» ՌԻՎԿ ՓԲԸ-ի 21.04.2020 թվականի թիվ 00003634/03 գրաֆիկով վարկային պայմանագրով, թիվ 096577 գրաֆիկով վարկային պայմանագրով քաղվածքները, ինչպես նաև «Արեգակ» ՌԻՎԿ ՓԲԸ-ի կողմից 21.04.2020 թվականին ձևավորված թիվ 00025 վարկի քաղվածքը, դատարանն արձանագրում է, որ «Կամուրջ» ՌԻՎԿ ՓԲԸ-ի և «Արեգակ» ՌԻՎԿ ՓԲԸ-ի վարկային քաղվածքներում արտացոլված վճարման ենթակա գումարների հանրագումարը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: Իսկ անդրադառնալով պարտապանի պարտավորությունների և առկա ակտիվների հարաբերակցության հարցին, դատարանն արձանագրում է, որ պարտապանի՝ դիմումում ներառված հայտարարության համաձայն, վերջինս իր անվամբ որևէ ակտիվ և իր անվամբ գրանցված սեփականություն չունի:

Ընդ որում պարտապանի սնանկության հատկանիշները ի հայտ են եկել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԴ/0009/02/19, ՏԴ/1013/02/18 և ՏԴ/1021/02/18 քաղաքացիական գործերով կայացված վճիռների հարկադիր կատարման փուլում և ներկայումս այդ հատկանիշները վերացած չեն: Ավելին ՀՀ ԱՆ ՀԿ ծառայության Տավուշի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Թ.Թորոսյանի 23.01.2020 թվականի կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշմամբ պահանջատիրոջը և պարտապանին առաջարկվել է, նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համատեքստում, դատարանի գնահատմամբ պարտապանի կողմից ներկայացվել են բավարար և թույլատրելի ապացույցներ կամավոր սնանկության դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստի՝

պարտապանի պարտավորությունների նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով նրա ակտիվների արժեքը գերազանցելու փաստը հիմնավորելու համար:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝«1. Պարտապանի կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե առկա են սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կամ 2.1-ին կետով կամ 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը:»:

Վկայակոչված փաստերի համատեքստում, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը և առերևույթ առկա են պարտապանի հաշվեկշռային անվճարունակության հատկանիշները, դատարանը գտնում է, որ վերջինիս պետք է ճանաչել սնանկ:

Միաժամանակ դատարանը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով՝ այն է. ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին վճռով դատարանն արգելանք է դնում տվյալ անձի գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որոնց վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել, պետք է արգելանք դնել Նաիրա Գրիգորի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող և բռնագանձման ենթակա գույքի վրա:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին և նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «իա» կետի համաձայն պարտապանը՝ սեփական անվճարունակությունը (սնանկությունը) ճանաչելու համար դատարան ներկայացվող դիմումներով ազատվում է պետական տուրքի վճարումից, դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 16-րդ, 17.1-րդ, 20-րդ, 91-93-րդ հոդվածները և ղեկավարվելով դիմումը վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 192-րդ հոդվածներով՝ դատարանը.

ՎՃՌԵՑ

Դիմումը բավարարել. Նաիրա Գրիգորի Թովմասյանին ճանաչել սնանկ:

Արգելանք դնել Նաիրա Գրիգորի Թովմասյանի գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել պարտապանի, պարտատիրոջ (պարտատերերի) կողմից Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Ծանոթություն – Սույն վճիռն օրենքով սահմանված ժամկետում չի բողոքարկվել:

ԴԱՏԱՎՈՐ Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Ձև 1
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

վճարների, հաշվարկների և գոյացած պարտքերի վերաբերյալ (13/09/2023 դրությամբ)

Կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր N 659

(կնքված 28/06/2007)

Վարձատու՝ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Վարձակալ՝ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆԱԻՐԱ

Պայմանագրի ծածկագիր՝ PC2PDBB

Հաշվարկների գործողության ժամկետը՝ 28/06/2007-13/09/2023

Պայմանագրի առարկան՝ Հողատարածք- 20.0 ք.մ, Հասարակական կառուցապատման, հասցե՝ Մյասնիկյան 2-րդ նրբ. 8 հարակից, կադ. համ՝

Կարգավիճակ՝ Ընթացիկ

Հ/Հ		Ամսաթիվ	Վարձավճար, դր.	Վճարում / ապառք / արտոնություն, դր.		Պարտք, դր.	
				Մայր գումար	Տույժ	Մայր գումար	Տույժ
1	Վճարում	28/06/2007		10,000		-10,000	
2	Հաշվարկ	31/12/2007	5,124			-4,876	
3	Հաշվարկ	31/12/2008	10,000			5,124	
4	Վճարում	10/08/2009		11,000		-5,876	569
5	Վճարում	30/12/2009		11,000		-16,876	569
6	Հաշվարկ	31/12/2009	10,000			-6,876	569
7	Հաշվարկ	31/12/2010	10,000			3,124	569
8	Հաշվարկ	31/12/2011	10,000			13,124	1,139
9	Վճարում	30/11/2012		24,477	523	-11,353	2,814
10	Հաշվարկ	31/12/2012	10,000			-1,353	2,814
11	Հաշվարկ	31/12/2013	10,000			8,647	2,814
12	Հաշվարկ	31/12/2014	10,000			18,647	4,392
13	Հաշվարկ	31/12/2015	10,000			28,647	7,795
14	Հաշվարկ	31/12/2016	10,000			38,647	13,037
15	Հաշվարկ	31/12/2017	10,000			48,647	20,090
16	Հաշվարկ	31/12/2018	10,000			58,647	28,968
17	Հաշվարկ	31/12/2019	10,000			68,647	39,671
18	Հաշվարկ	31/12/2020	10,000			78,647	52,233
19	Հաշվարկ	31/12/2021	10,000			88,647	66,586
20	Հաշվարկ	31/12/2022	10,000			98,647	82,764
21	Հաշվարկ	13/09/2023	7,014			105,661	95,391
	Ընդամենը		**162,138**	**56,477**	**523**	**105,661**	**95,391**

Վճարումներն անհրաժեշտ է կատարել Դիլիջան համայնքի բյուջեի 900405051682 հաշվեհամարին:

Տեղեկանքը կազմեց՝ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(ստորագրություն)

01/09/2023